

ՇԻԼԹԱՂԱԹ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԶՐՈՒՅԹԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(XIV–XVIII դդ.)*

ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ շիլթաղաթ, իլխաններ, հարկեր և տուրքեր, հարկային համակարգ, հրովարտակ, անօրինական հարկեր:

Նախաբան

Իլխանության սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես հպատակ ժողովուրդների (հայեր, պարսիկներ, վրացիներ, ասորիներ և այլն) պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Իլխանությունում կենտրոնական իլխանության թուլացմանը զուգահեռ՝ լայն տարածում էին ստացել բարձրաստիճան պետական պաշտոնյաների չարաշահումները, կաշառակերությունը, գանձագողությունը և այլ արատավոր երևույթներ: Մյուս կողմից ուշիլխանական շրջանում ձևավորվել էր հարկային բարդ և բազմաշերտ մի համակարգ, որը գրեթե անփոփոխ պահպանվել էր նաև ջալաիրյանների, Կարա ու Ակ Կոյունլուների և ընդհուպ Սեֆյանների տիրապետության առաջին շրջանում: Հպատակ ժողովուրդներից գանձվող հարկերի ու տուրքերի թիվը երբեմն գերազանցում էր երեք տասնյակը: Ժամանակի պարսկական, արաբական, հայկական և այլ աղբյուրները հաճախ վկայում են հպատակ ժողովուրդների կեղեքման, ծանր հարկային լծի ու պաշտոնյաների ապօրինությունների մասին: Սակայն, չնայած դրան, պետական պաշտոնյաների հարկահավաքության գործում թույլ տված չարաշահումների արդյունքում արքունի գանձարանը հիմնականում դատարկ էր մնում, և անհրաժեշտություն էր առաջանում պարբերաբար նորանոր հարկերի ու տուրքերի՝ արտակարգ հարկումների պատրվակով կրկին հարկելու հպատակ ժողովուրդներին: Դեռևս XIV դ. սկզբից իլխանության հպատակ երկրներում տարածում է ստանում հարկահանության մի արատավոր, աղբյուրներում հաճախ «ապօրինի» կոչված մի ձև, որը հարկամատյաններում և ապահարկության հրովարտակներում հանդիպում է նաև որպես գանձվող հարկատեսակ՝ երբեմն ունենալով արտակարգ հարկերի գանձման ընդհանուր նշանակություն: Խոսքը շիլթաղ կամ շիլթաղաթ երևույթի և հարկային եզրույթի մասին է:

* Ներկայացվել է 09. II. 2022 թ., գրախոսվել է 11. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 27. V. 2022 թ.:

Հարկային համակարգի բարեփոխումների փորձերը XIII–XVI դդ.

XIII դ. երկրորդ կեսին իլխանություն կազմավորմանը հաջորդում են մոնղոլական հարկային համակարգում տեղ գտած փոփոխությունները՝ ի թիվս չրջանառության մեջ դրված նոր հարկերի և հարկային պարտավորությունների, ինչպես կ'ուսուցիչուր, կ'ալան, տամդա, ուլակ', կոնալդա, ալաֆե-ուլուֆե, սավարի, սուրսավթ, իխրաշաթ, շանակիս, չիլթադաթ, թադար և այլն: Հարկերի մեծ թիվը (մոտ 30 հարկեր և տուրքեր), հարկային համակարգում տեղ գտած թերացումների ու ապօրինությունների արդյունքում XIII դ. վերջին իլխանների տերությունը կանգնում է ներքաղաքական և տնտեսական լրջագույն ճգնաժամի առջև, ինչը դրդում է իլխան Ղազան խանին (1295–1304 թթ.) անցկացնել մի շարք կարևորագույն բարեփոխումներ՝ կանոնակարգելով նաև հարկային համակարգը: Սակայն Ղազան խանի բարեփոխումները երկար կյանք չեն ունենում, և նախկին հարկային համակարգը գրեթե նույնությամբ շարունակում է կիրառության մեջ մնալ առնվազն մինչև XV դ. վերջերը:

Հետիլխանական շրջանում հարկային համակարգի հաջորդ բարեփոխումներն իրականացվել են Ակ Կոյունլուների տիրապետության շրջանում: Հայտնի է, որ Ակ Կոյունլու սուլթան Ուզուն Հասանը (1453–1468/1468–1478) 1477–1478 թթ. անցկացրել է հարկային բարեփոխումներ, որոնց հիմքում ընկած էր նրա կազմած օրենսգիրքը՝ Կանուննամեն, որը, սակայն, չի պահպանվել¹: XVI դ. քուրդ պատմիչ Շարաֆ խան Բիդլիսին այս մասին գրում է. «Հասան բեկը (Ուզուն Հասանը – Գ. Մ.) ռայաթների հովանավորն էր. նա ձեռնարկեց ռայաթներից հարկեր գանձելու այնպիսի կարգեր, որով մինչ այժմ ուղղորդվում են Ազարբայջանի, Իրաքի և Ֆարսի տիրակալները»²: Կարևոր է նշել, որ Ուզուն Հասանի Կանուննամենի դրույթները տեղ էին գտել ոչ միայն Սեֆյան իրանի հարկային համակարգի հիմքում, այլև առնվազն մեկ երկու տասնամյակ դրանք շարունակվում էին կիրառվել Օսմանյան կայսրության մեջ՝ նախկինում Ակ Կոյունլուների տերության մեջ ընդգրկված և ապա օսմանյան թուրքերի կողմից նվաճված երկրներում կամ երկրամասերում³: Ըստ երևույթի, Ուզուն Հասանի բարեփոխումներն արդյունավետ չեն եղել և շատ ծանր են եղել: Այդ են վկայում ժամանակի աղբյուրները. օրինակ՝ «Էքզրումի վիլայեթի Կանուննամեում», որը փոփոխության էր ենթարկվել միայն 1540 թ., ասվում է՝ այդ փոփոխության պահանջն առաջացել է նրանից, որ «ռայաթները և վաճառականները այլևս չեն կարողանում տանել Հասան փադիշահի օրոք սահմանված օրենքները»⁴: Ուզուն Հասանին հաջորդած Յաղուբ սուլթանի օրոք (1478–1490 թթ.) հարկային համակարգում փոփոխություններ է փոր-

¹ Այն հայտնի է դարձել «Qānūn-nāma-ye Hasan Pādšāh» կամ «Dastūri-Hasan Beī» [թարգմ.՝ Հասան փադիշահի (բեյի) օրենսգիրք] անվանումով (տե՛ս Quiring-Zoche. 1986, 163–168):

² Bidlīsī. 1875, 262.

³ İnalçık. 1973, 71.

⁴ Зулалаян. 1971, 99–110.

ձուժ անցկացնել սաղըր, կաղի (ղատավոր) Սաֆի աղ-ղին Իսա Սավաղին⁵: Սակայն նրա ձեռնարկումներն անհաջողության են մատնվում: Այլ Կոյուն-լուների պետության մայրամուտին հաջողության ավելի մեծ հավանակա-նություն կարող էր ունենալ Այլ Կոյունլու սուլթան Ահմադ Գյովդեի (գյով-դե՝ կարճահասակ) իրականացրած հարկային բարեփոխումը: Այս մասին պատմագիր Հասան Ռումլուն գրում է. «Ահմադ բեկ բեն Ուղուրլու Մուհամ-մադ բեն Հասան փաղիչահը ժողովրդի սիրեցյալն էր. նրա օրոք հարկահա-նության դարպասները փակվեցին»⁶: Նա իր կարճ իշխանության (մոտ վեց ամիս) ընթացքում փորձեց փրկել տերությունը՝ տնտեսական ու քաղաքա-կան ճգնաժամից բարեփոխումներ անցկացնելով, սակայն արդյունքում վաս-տակեց վերնախավի թշնամանքը և, ի վերջո, դավադրաբար սպանվեց:

Շիլթաղաթ. ստուգաբանությունը և երևույթի առանձնահատկու-թյունները

XV դ. վերջից վավերագրերում և իրանի պատմության վերաբերյալ գրա-վոր աղբյուրներում հաճախ հանդիպում է շիլթաղաթ հարկային տերմինը, որի նշանակությունը մինչև այժմ լիովին հասկանալի չէ: Հետազոտողները տերմինի մեկնաբանությունը հաճախ տվել են առանց հաշվի առնելու բառի իմաստային երանգները, և շիլթաղաթը մեկնաբանվել է մասնակիորեն, տրվել են նաև իրարամերժ, մոտավոր նշանակությամբ մեկնաբանություններ: Շիլ-թաղաթը, երբեմն էլ շիլթաղ ձևով, մեկնաբանվել է որպես ապօրինի հարկ, տարբեր պատրվակներով հարկերի գանձում, պատրվակ կամ արտակարգ հարկ, ընդհանրապես որպես ապօրինի հարկերի հավաքական անվանում և այլն: Սակայն երբեիցե համապարփակ չի ներկայացվել, թե ի՞նչ էր իրենից ենթադրում շիլթաղաթը, ի՞նչ նշանակություն և կիրառություն ուներ, եթե հարկ էր, ապա որքա՞ն, որտե՞ղ, ինչպե՞ս և ո՞ր դեպքերում էր այն գանձ-վում:

Շիլթաղաթ բառը կազմված է շիլթաղ և արաբերենի – աթ հոգնակիակերտ վերջածանցից: Հակառակ տարածված թյուր տեսակետին, թե այն մոնղոլերեն բառ է, պետք է ասել՝ շիլթաղը (հետևաբար նաև՝ շիլթաղաթը) ծագում է ույ-ղուրերեն *tilta:ğ* / *tilta:ğ* պատճառ, նաև պատրվակ նշանակությամբ բառից, որը հետագայում անցել է մոնղոլերենին՝ վերածվելով շիլթաղի (*šiltağ*)⁷: Եզ-րույթի ամենավաղ մեկնաբանություններից մեկը XVII դ. վերջին քառորդին տալիս է Ֆ. Մենինսկին՝ շիլթաղը մեկնաբանելով որպես չինծու վեճ, բամբա-սանք, ոտնձգություն⁸: Ամենայն հավանականությամբ, բառն իր հիմքում ունեցել է *til/dil* լեզու արմատը, որը լիովին բացատրում է շիլթաղի բամբա-սանք, վեճ, զրպարտություն իմաստային նրբերանգները: Կարծիք է հայտնվել նաև, որ բառը ծագել է թյուրք→մոնղոլերեն *siltan'an* (պատրվակ, պատ-

⁵ Khunjī. 1957, 92–95.

⁶ Rūmlū. 1931, 19; Rūmlū. 1934, 9.

⁷ Clauson. 1972, 494.

⁸ Meninski. 1680, 2852; Meninski. 1687, 1701, 1912.

ճառ հորինել) բայից⁹։ Շիրթաղը մեծ տարածվածություն է ունեցել թյուրքական և մոնղոլական ժողովուրդների մոտ¹⁰։ Լ. Բուդագովի¹¹, Յ. Վյուլլերի¹² և Ա. Վամբերի¹³ գրեթե նույնաժամանակ՝ XIX դ. 60–70-ականներին, հրատարակված բառարաններում բառի մեկնաբանության ուշագրավ միտում է նկատվում։ Շիրթաղը թվարկված բառարաններում մեկնաբանվում է հիմնականում «վատաբանություն, սուտ ու կեղծիք, վեճ, թշնամանք, վատ համբավ» իմաստներով, և միայն մի դեպքում՝ պատրվակ, առիթ իմաստով։ Առաջին նշանակությունները՝ մի ապօրինի բան անելու իմաստով կեղծիքի, սուտ բամբասանք իմաստների առումով, հետաքրքիր է, որ իմաստային մոտ փոխառությամբ տեսնում ենք նաև հայերեն օրինակներում։ Որոշակիորեն տարբերվում է Վ. Ռադլովի մեկնաբանությունը։ Նա ևս ներկայացնում է բառի սուտ, զրպարտություն, բամբասանք իմաստները, սակայն նշելով նաև թալանի ու կեղեքման նշանակությունը, ինչը հատկապես լավ է երևում չլիթաղչի šiltāqčī թալանչի, ավագակ ածանցյալ ձևի թարգմանությունից¹⁴։

Մասնագիտական գրականության մեջ չիրթաղաթի մեկնաբանության առաջին փորձերից մեկը հանդիպում է Վ. Մինորսկիի՝ Կասիմ բեգ Կարա Կոյունլուի հրովարտակի վերլուծության մեջ։ Ըստ հեղինակի, բառը ծագել է šiltaghan, siltaq մոնղոլերեն բառից և ունեցել է «պատճառ» նշանակությունը։ Մինորսկիին այն բացատրում է հղելով Ն. Պոպլեի մոնղոլերեն բառարանը՝ պարսկերեն բահանե՝ (bahāne) բառի հոմանիշային կիրառությամբ՝ որպես պատրվակ, պատճառ¹⁵։ Ապա եզրակացնում է, որ հետագայում չիրթաղաթը ձևով է բերել կեղեքում, հալածանք իմաստները¹⁶։ Մինորսկիի հրատարակած Կասիմ բեգի հրովարտակում չիրթաղաթն այլ հարկերի՝ կոնալդայի, ալաֆե-ուլուֆեի, իխրաջաթի և այլն, կողքին թվարկվում ու հստակ նշվում է որպես հարկային պարտավորություն¹⁷։

Հարկ է նշել, որ Մինորսկիի այս բացատրությունը հետագայում փոխառվել և օգտագործվել է բազմաթիվ այլ հետազոտողների կողմից ևս։ Մյուս կողմից, Ե. Էլթերը հետիոթնական շրջանի Իրաքի ֆիսկալ համակարգում չիրթաղաթը մեկնաբանում է որպես արտակարգ հարկեր¹⁸։ Հայտնի տեսակետների թվում տարբերվում է արևելագետ Պ. Լյուֆտի կարծիքը, ով բառը համարում է որպես շարիաթով չհաստատված և այդպիսով անօրինական բնույթ ունեցող, բայց իշխանությունների կողմից հաստատված հարկ¹⁹։

⁹ Décsy. 1998, 155.

¹⁰ Շիրթաղի թյուրք-մոնղոլական տարբեր լեզուների և խոսվածքների մեջ տարածվածության, լեզվաբանական վերլուծության համար օգտակար կարող է լինել հետևյալ աշխատությունը. Ölmez. 2015, 147–151.

¹¹ Будагов. 1869–1871, 671.

¹² Vuller. 1867, 457.

¹³ Vámbéry. 1867, 365.

¹⁴ Радлов. 1893, 1078–1079.

¹⁵ Мукаддиматал-Адаб. 1938, 333.

¹⁶ Minorsky. 1939, 947.

¹⁷ Minorsky. 1939, 930.

¹⁸ Ashtor. 1976, 250.

¹⁹ Luft. 1984. 92–95.

Դժվար է համաձայնել խորհրդային շրջանի հայտնի արևելագետ Ի. Պետրուշևսկիի այն մտքին, որ շիլթաղաթը հավաքական հարկեր նշանակությամբ նույնանում էր իխրաջաթի հետ²⁰: Նախ, հեղինակի այդ մտքին հակասում է շիլթաղաթը որպես հարկային պարտավորություն իր իսկ կողմից դիտարկելը, երբ ընդգծում է, որ Ահմադ Գյուլբեի բարեփոխմամբ պահանջվել էր «ոչ մեկին հանձնագատացնել շիլթաղաթ և իխրաջաթ [հարկերով]»²¹:

Շիլթաղաթի նկարագրությունը գրավոր աղբյուրներում

Շիլթաղի և շիլթաղաթի առաջին վկայություններից մեկը միջնադարյան արևելյան գրավոր աղբյուրներում հանդիպում ենք Ջալայիրյան արքունի պաշտոնյա Մուհամմադ Հինդուշահ Նախջիվանիի աշխատության մեջ šiltāq և šiltāqāt ձևերով. «Հիշյալ տեսուչներին կարիքավորների պետքերը (զաքաթից բաժին — Գ. Մ.) հասցնելու գործում ոչ մի պատրվակով ու շինծու պատճառով/վեճով կառույց չփնտրեն և չհետաձգեն²² (Այն է թե, ոչ մի շինծու պատճառով ապօրինություն չանեն, (չչորթեն?))²³»: Հաջորդիվ Նախջիվանին հիշատակում է նաև շիլթաղաթ արաբականացված հոգնակիակերտ —աթ (āt) մասնիկով տարբերակը՝ šiltāqāt, որը, ըստ երևույթին, ընդհանրապես գրավոր աղբյուրներում հանդիպող առաջին վկայություններից է: Այստեղ նա տերմինն արդեն կիրառում է ապօրինի հարկման իմաստային երանգով: Տեքստից ակնհայտ է դառնում, որ XIV դարում շիլթաղաթն արդեն իսկ մեծ խնդիր էր դարձել՝ փնտելով իլխանության տնտեսական և հասարակական կյանքի զարգացմանը: Նախջիվանին գրում է. «... և եթե պատճառն այն է, որի վրա պնդում են քյադխողաները, ապա հաքիմները, հարկահանները (մութասարիֆ — Գ. Մ.), ծառաներն (նոքարներն — Գ. Մ.) ու նրանց նշանակողները այն ինչ շիլթաղաթով ու շանակիսով մարդկանցից վերցրել են, ամբողջությամբ պետք է վերադարձնեն, հանձնեն մարդկանց և ոչ մի դեպքում ներողությունն էլ մեծահոգություն չհամարեն»²⁴:

Հարկի ապօրինի գանձման մեխանիզմն ու երևույթի արմատները պետք է փնտրել մոնղոլական «միջավայրում»՝ մոնղոլական տիրապետության շրջանում: Հարցի հնարավոր պատասխանը կարելի է գտնել իլխանների պատմագիր Ռաշիդ ադ-դինի մոտ, ով նկարագրում է ապօրինի հարկման մի հետաքրքիր համակարգ: Համաձայն նրա պատմության, իլխանության վարչական տարածքները տրվում էին հաքիմներին կապալով՝ հարկելու: Հավաքված հարկերը գանձելու համար դիվանից կամ արքունիքից ուղարկվում էին հարկահաններ ու սուրհանդակներ, որոնց կեցության և այլ ծախսերը պիտի

²⁰ Петрушевский. 1949, 277–278.

²¹ Петрушевский. 1949, 273.

²² Нахчивани. 1964, 300.

²³ Բնագիր տեքստը տառադարձմամբ՝ «... dar rasāndan-i vujūh-i vājibāt-i mustahāqqān be mustahfīzān-i madkūr bī hič ‘udr ū šiltāq tamassuk najūyand va mouqūf nadārand»: Տեքստի ընթերցման վերաբերյալ քննարկումների, թարգմանության և խորհրդատվության համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող, բ. գ. թ., դոցենտ Արայոմ Տոնոյանին:

²⁴ Nakhchivani. 2019, 434.

Հոգային հաքիմները՝ հարկերից գոյացած գումարներով: Հաքիմները հարկերից գանձված գումարների 4/6-րդը շոալյորեն ծախսում էին վերջիններիս վրա, իսկ մնացյալ գումարը սեփականում էին՝ բաժին հանելով բիթիկչիներին, զորավարներին, նայիրներին ու վեզիրներին: Արդյունքում կարիք էր առաջանում նորից հարկերը հավաքելու, իսկ հաքիմները ռայաթների մոտ արդարացնում էին նոր հարկերի հավաքումը՝ մատնացույց անելով սուրհանդակների հենց հարկապահանջության առաքելությանը ուղարկված լինելու փաստը: Ապա այդ պատրվակով վերջիններիս կարիքները բավարարելու համար նորից հարկեր էին սահմանվում (որպես պարենավորում՝ ուլուֆե, որպես կարևոր գործերի ծախսեր՝ մուհիմաթ, որպես արտակարգ ծախսեր ու պահանջմունքներ՝ իխրաջաթ և այլն): Բնականաբար, կրկին հավաքված հարկը ևս դիվան չէր հասնում: Վեզիրներն էլ, գործարքի մեջ լինելով հաքիմների հետ, հարկերը հավաքելու համար բաց էին թողնում բերաթներ, որոնցով և սուրհանդակները ուղղվում էին հաքիմների մոտ ու ձեռնունայն վերադառնում: Դիվանին կամ արքունի գանձարանին, ըստ Ռաշիդ ադ-դինի, սահմանված 10 դինարի փոխարեն բաժին էր հասնում լավագույն դեպքում 2 դինար: Արդյունքում ստացվում էր, որ ուղարկված սուրհանդակների վրա, ի դարմանս ռայաթների և Ռաշիդ ադ-դինի, շոալյորեն ծախսվում էր հարկերի մի մասը, ապա այդ ծախսերը ուժացվում էին, և դրանով հիմնավորվում էր և՛ կրկնակի հարկման անհրաժեշտությունը, և՛ հարկերից հավաքված գումարը դիվան չուղարկելը²⁵: Այսինքն, տեղի էր ունենում կրկնակի, հավելյալ հարկում:

Երկրապետական իրողությունների մեջ

Ըստ Ռաշիդ ադ-դինի, Ղազան խանն իր բարեփոխումներով վերջ է դնում այս երևույթին: Սակայն վստահորեն կարելի է պնդել, որ նրա բարեփոխումներն ու որոշումները երկար կյանք չեն ունեցել: Դա է վկայում նաև հետևյալ դեպքը. հայերեն ձեռագրերի մի հիշատակարանում գրիչ Յակոբը նկարագրում է վերը նշած երևույթը՝ ասելով, որ Օլջեյթու ինուգաբանդա խանի օրոք «գարունը եկան և հարկեցին, ապա աշնանը խանը մեռավ (1316 թ.) և եկան ոմն Ադյադու, Սինթամուր և Հասանթամուր 1300 մարդկանցով ու կրկին հարկ առին»²⁶:

Կարելի է ենթադրել, որ XIII դարի վերջի–XIV դարի սկզբով թվագրվող վերը հիշատակված դեպքերը նկարագրում են հենց շիլթադաթի բնույթը, դրա գանձումը և ընկալումը որպես ըստ անհրաժեշտության (հաճախ՝ չինծու պատճառներով) իրականացվող կրկնակի կամ հավելյալ հարկում:

Հետաքրքիր է, որ շիլթադը կամ շիլթադաթը XIII–XV դդ. հայկական աղբյուրներում որևէ ձևով չի հիշատակվում ո՛չ որպես հարկատեսակ և ո՛չ էլ այլ խմատներով: Սակայն ակնհայտ է, որ տերմինը եղել է գործածության մեջ և պատմական աղբյուրներում սկսում է հայտնվել XVI–XVIII դդ.: Լ. Խաչիկյանի ենթադրությամբ՝ դրան նախորդած շրջանում առանց շիլթադաթ բառի կիրառության, բայց նույն նշանակությամբ հայերեն ձեռագրերում հանդիպում են տուգանք, կեղեքում ձևերը²⁷: Հայկական աղբյուրներում XVI

²⁵ Рашид ад-Дин. 1946, 247–256.

²⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 2018, 341:

²⁷ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1958, 79:

դարից սկսած բառը հանդիպում է չլլթադ/խ, չիլթադ, չլթախ, չըրթադ ձևով: Ամենայն հավանականությամբ, առաջին վկայություններից մեկը հանդիպում է Սիմեոն Լեհացու աշխատության մեջ, որտեղ չիլթադը կիրառվում է ապօրինություն, կեղեքում և բանասարկություն իմաստային երանգներով, «չլթախ» ձևով և հոմանիշ իֆդիրա (արաբ.՝ զրպարտություն) բառի հետ համադրմամբ²⁸: Ալեքսանդր Զուլայեցի կաթողիկոսի (1706–1714 թթ.) կոնդակներից մեկում ԺԴ վկայաթղթի մեջ, կիրառվում է «չլլթադ» ձևով և որևէ բան խաբեություն կատարելու իմաստ է պարունակում²⁹: Նույն շրջանում չիլթադը զրպարտությամբ կեղեքելու իմաստով կիրառություն է գտնում 1717–1724 թթ. Թավրիզում անգլիական արևելահնդկական ընկերության ներկայացուցիչ³⁰, հայ կաթողիկ վաճառական Իլյաս Մուշեղյանի կամ Եղիա Կարնեցու՝ Փրանսիացի գործընկերոջը՝ Պոռեկարին, ուղղված նամակում³¹: 1715 թ. գրած նամակում նա Պոռեկարին խնդրում է Սպահանում ձեռք բերել երաշխավորություն, որպեսզի իր թամպաբուր՝ ծխախոտի բեռը բերելիս խոչընդոտներ չառաջանան, քանի որ իրեն նախագգուշացրել են, թե «այդտեղ չլլթադ են առնում», այն է, թե՛ զրպարտությամբ, զանազան պատրվակներով փորձում են ապրանքը խել կամ առնվազն տուգանք, կաշառք կորզել³²: Նույն իմաստով մի կիրառության էլ հանդիպում է Սիմեոն Ա Երևանցու հիշատակարանում տեղ գտած «չառ և չիլթախ» ձևը, որտեղ ևս չիլթադը պետք է հասկանալ բանասարկությամբ շահ կորզելու իմաստով, հատկապես, որ այստեղ չիլթադ արվել է «ի քէն» և «վասն իւր քաղցածութեան»³³: Հետաքրքիր է այստեղ չիլթադը «չառ» (բրբռ.՝ չինծու մեղադրանք) իմաստային կիրառությունը, որը նույն նշանակությամբ արտացոլվում է Ֆ. Մենինսկիի այս հիշատակմանը ժամանակակից բառարանում: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (1734–1737 թթ.) իր պատմության մեջ չլլթադը գործածում է հարկային տեուրի իմաստով. «Եվ Գանձակի խաները և այլ զաբիթները միշտ շամաթա չլլթադ անելով թույլ չեն տալիս հանգիստ մնալ, այլ միշտ կեղեքում են և կողոպտում»³⁴: Ամենայն հավանականությամբ, հենց XVII–XVIII դդ. էլ այս տերմինը թափանցել է նաև հայերենի բարբառներ՝ իր մեջ ունենալով ապօրինի մի բան լինելու/անելու իմաստ, նաև նշանակելով անպարկեշտ ու անամոթ. օրինակ՝ «էնքան լավա, վեր մեր մաչին մին չլլթադ չիկա» կամ «Ատոր կրնիկը չլլթախին մեկն է»³⁵: Փոքր-ինչ աղավաղված՝ չլթադ և չըրթադ ձևերով (զրպարտություն նշանակությամբ) բառը հանդիպում է նաև Դերսիմի³⁶, Խարբերդի (Բարձանճ գյուղի օրինակով) հայերեն բարբառներում³⁷: Բառը հանդիպում է նաև հայկական ժողովրդական ֆոլկլորում, օրինակ, Թավրիզում Եղիա Կարնեցու գրի առած

²⁸ Սիմեոն դպրի Լեհացուց ուղեգրություն. 1936, 86, 272:

²⁹ Քյիւրտեան. 1959, 456–461:

³⁰ Ե. Արքայեր Եղիա Մուշեղյանի գրական ժառանգությունից. 1972, 103–114:

³¹ Չուգասոյան. 1983, 61–74:

³² Եղիա Կարնեցու գիվանը. 1968, 68:

³³ Դիվան հայոց պատմության. 1913, 349–350:

³⁴ Կրետացի. 1870, 74:

³⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2007, 247:

³⁶ Բաղրամյան. 1960, 157:

³⁷ Ծերուն. 1938, 267–269:

առականներից մեկում՝ «գելը գառին չլիժաղ անելով – (անհիմն մեղադրելով, զրպարտելով)»³⁸, և հեքիաթներում³⁹: Շլիժաղի ուշագրավ մեկնաբանություն և կիրառություն դեպքեր են նկարագրվում Ղարադաղի հայության պատմությունից վերաբերյալ Հ. Հովսեփյանի աշխատանքում: Հարկ է նշել, որ հեղինակը բավական դիպուկ նկարագրում է, որ «չլիժաղը ապօրինություն էր, մեղադրանքի հատուցում՝ տուգանքի ենթարկելու համար»⁴⁰: Ապա առանձնացնում է չլիժաղի «կատակով» ձևը, երբ հարսանիքներին գուռնաչին՝ երաժիշտը, ոտքը դնում էր տան դռանը դիմաց ու արգելում մուտքը նորապսակներին տեսակցությունը, մինչև իրեն նվերներ ու գուժար չէին տալիս: Սահմանապահ զինվորը, օրինակ, փակում էր իր ավանակով դաշտում աշխատելու շտապող գյուղացու ճանապարհը և պահանջում ավանակը տալ իրեն ու ուղեկցել մինչև հարևան գյուղը: Սա հորինված պատրվակ էր գյուղացուն խանգարելու, ստիպելու «գլուխն ազատելու» միջոց գտնել: Գյուղացին տալիս էր նման դեպքերի համար նախապես պահած գումարը և ազատորեն գնում դաշտ աշխատելու⁴¹: Սա էր հենց չլիժաղի էությունը, սա էր կոչվում չլիժաղ՝ ապօրինություն, քանի որ զինվորը իրավունք չուներ թողնել իր գործը, սահմանը և զբաղվել գումար կորզելով:

Այս վկայությունները, իրանի օրինակով մասնավորապես, ցույց են տալիս նաև, որ չլիժաղն առնվազն մինչև XX դարի սկիզբը և՛ որպես երևույթ, և՛ որպես ապօրինություն մատնանշող բառ գոյություն է ունեցել:

Եզրակացություն

Կարելի է ասել, որ չլիժաղաթը, որպես սահմանված հարկային պարտավորություն, հստակ հայտնվում է XV դարի երկրորդ կեսից: Այդ են վկայում Ակ Կոյունլուների ու Սեֆյանների հրովարտականքը և ժամանակի գրավոր աղբյուրները: Շլիժաղաթի անվան տակ աղբյուրները, ամենայն հավանականությամբ, նկատի են ունեցել որևէ հարկի կրկնակի կամ հավելյալ գանձումները՝ չինծու պատրվակով: Ըստ ամենայնի՝ այն հավելյալ գանձելիս հարկվել է այն նույն չափով, ինչ ի սկզբանե սահմանված է եղել տվյալ հարկի համար:

Կարելի է կարծել, որ ճիշտ է չլիժաղաթը ուղղակիորեն մեկնաբանել որպես անօրինական հարկ. այդպիսին լինելու դեպքում այն որպես երևույթ, որպես հարկային պարտավորություն գոյություն չէր ունենա և, հետևաբար, կարիք չէր լինի կոնկրետ մարդկանց կամ հաստատությունների դրանից հատուկ ազատել ապահարկության հրովարտականքով: Ինչպես նշվեց, 1477–1478 թթ. հարկային մի բարեփոխում էլ իրականացրել էր Ուզուն Հասանը: Ըստ քուրդ պատմիչ Շարաֆ խան Բիդլիսիի, «Նա (Ուզուն Հասանը – Գ. Մ.) կազմակերպեց ռայաթներից հարկերի գանձումը Կանունի համաձայն»⁴²: Այսինքն, Ուզուն Հասանը հարկահանությունը սահմանում էր ըստ Կանունի, այն է, թե՛ իր օրենքների ու օրենսգրքի համաձայն, և, կարծես թե, ոչ Շարիաթի նորմերին համապատասխան: Ստացվում է, որ ապահարկության

³⁸ Չ ու գ ա ս զ յ ա ն. 1984, 187:

³⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ. 1973, 763:

⁴⁰ Հ ո վ ս ե փ յ ա ն. 2021, 529:

⁴¹ Հ ո վ ս ե փ յ ա ն. 2021, 570:

⁴² Bidlīsī. 1875, 262.

Հրովարտականերից թվարկմամբ հայտնի վերոհիշյալ հարկերի ստվար շարքը, այդ թվում՝ չիլթադաթը և մնացած հարկերն ու տուրքերը կամ տեղ են գտել Կանոննամեում և, հետևաբար, մինչև XVI դ. վերջը գանձվել, ինչպես Շարաֆ խան Բիդլիսին է նշում՝ Իրաքում, Փարսում ու Ազարբայջանում⁴³, իսկ դրանց գանձումը Կանոննամեով հաստիք արգելված չի եղել: Սա մեծ կարևորություն ունեցող հանգամանք է, հատկապես, երբ շեշտվում է հարկերի անօրինականությունը: Կարելի է ենթադրել, որ հարկերի անօրինական լինելը դիտարկվում էր հենց Շարիաթի տեսանկյունից, և ստացվում է՝ չիլթադաթը Կանոննամեի տեսանկյունից անօրինական չէր կամ այդպիսին չէր համարվում: Ասվածի լավագույն ասպցույցն է Ահմեդ Գյովդեհի բարեփոխումը, որն ուներ կարևոր մի առանձնահատկություն. դրանով փորձ էր արվում, հարկային համակարգը կանոնակարգելուց բացի, հարկերի մի ստվար շերտ կիրառությունից հանել, անօրինական որակել, և թողնել միայն շարիաթի վրա հիմնված հարկերի գանձումը՝ խարաջը, ուշրը, զաքաթ և ջիզյան⁴⁴: Ահմեդ Գյովդեհի բարեփոխմամբ անօրինական հարկեր էին ճանաչվել իխրաջաթը և չիլթադաթը⁴⁵: Ասվածից կարելի է ենթադրել, որ Գյովդեհի բարեփոխմամբ անօրինական ճանաչված չիլթադաթն ու մնացյալ հարկերը և հարկային պարտավորությունները նախկինում օրինական էին՝ առնվազն արգելված կամ անթույլատրելի չէին: Անօրինական համարված մնացյալ հարկերը Ակ Կոյունլուների և Սեֆյանների Հրովարտականերում ու այլ փաստաթղթերում այդուհետ սկսում են հիշատակվել mutālibāte huqmī va mutālibāte ghayri huqmī (օրինական, պաշտոնական ու ոչ օրինական պահանջմունքներ)⁴⁶ կամ mutālibāte masdūde (անթույլատրելի պահանջմունքներ՝ արգելված հարկեր) և այլ արտահայտություններով⁴⁷:

Գոռ Մարգարյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրիստոնյա արևելք բաժնի ավագ գիտաշխատող, փոխտնօրեն: Գիտական հետաքրքրություններ՝ միջնադարյան մուսուլմանական արևելքի պատմություն, արևելյան աղբյուրագիտություն, կովկասագիտություն: Հեղինակ է 1 ուսումնամեթոդական դասագրքի և ավելի քան 15 հոդվածի: gor_margaryan@live.com

⁴³ Այս հարցին անդրադարձել է աղբյուրների հետազոտող Օ. Էֆենդիևը, ընդամենը կրկնելով Ա. Լեմբտոնի այն միտքը, որ Ռեզուն Հասանի օրենքները նշյալ տարածաշրջանում գործել են նաև առաջին Սեֆյանների օրոք, այն է՝ XVI դարում: Սակայն Օ. Էֆենդիևի եզրակացությունն ու այդ աշխատանքը պիտանի չեն գործածության համար, քանի որ այնտեղ ուղղակիորեն կրկնվում է Ա. Լեմբտոնի միտքը, բացի այդ՝ կրկնվել է նաև հղված գրականությունը, ընդ որում հղելով Շարաֆ խան Բիդլիսիի պատմագրական երկի Վելիամինով-Ջեռնովի հրատարակությունը՝ Օ. Էֆենդիևն աղբյուրի էջերը հղել է սխալ (տե՛ս Эфендиев. 1957, 150–180):

⁴⁴ Петрушевский. 1942, 28–37.

⁴⁵ Minorsky. 1955, 459.

⁴⁶ Minorsky. 1939, 930–933.

⁴⁷ Փ ա փ ա գ յ ա ն. 1956, 28:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաղրամյան Ռ. 1960, Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 174 էջ:

Դիվան հայոց պատմության. 1913, խմբ. Գիւտ Աւագ Քահանայ Աղանեանց, գիրք ԺԱ, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեան, Դ+504 էջ:

Ե. Արքայեր Եղիա Մուշեղյանի գրական ժառանգությունից. 1972. – ՊԲՀ, № 1, էջ 103–114:

Եղիա Կարնեցու դիվանը. 1968, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյան, Երևան, Միտք, 366 էջ:

Ժե դարի հայերեն ծեռագրերի հիշատակարաններ. 1958, մաս II (1451–1480 թթ.). կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., CXLI+601 էջ:

Ծերուն Պ. Մանուկ. 1938, Բարջանձ գիւղ. – Համայնապատում (1600–1937), Պոստոն, 280 էջ:

Կրետացի Ա. 1870, Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր շահին պարսից, հ. 1, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, Դ+129 էջ:

Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ. 2018, ԺԴ դար, մաս Ա, կազմեց Լ. Խաչիկյան և ուրիշներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., XLIV+599 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2007, հ. 4, կազմ.՝ Գ. Գասպարյան, Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան և ուրիշներ, Երևան, 451 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1973, հ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 777 էջ:

Հովսեփյան Հ. 2021, Ղարաղաղի հայերը. – Արցախի ժողովրդագիտությունը, հ. 6, Ստեփանակերտ, Ազգագրություն, էջ 305–645:

Չուգասյան Բ. 1983, Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը. – ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 61–74:

Չուգասյան Բ. 1984, Եղիա Մուշեղյանը առակագիր. – ՊԲՀ, № 1, էջ 178–195:

Սիմէոն դարի Լեհացոյ ուղեգրութիւն. 1936, տարեգրութիւն և յիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսէս, Վ. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, ԽԴ+493 էջ:

Փափազյան Հ. 1956, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, ար. Ա (ԺԵ–ԺԶ դդ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 316 էջ:

Քյիւրտեան Հ. 1959, Նութեր Ալեքսանդր Զուղայեցիի կենսագրութեան. – «Հասկ» (Անթիլիաս), թիւ 11, էջ 456–461:

Будагов Л. 1869–1871, Сравнительный словарь турецко-татарских наречий, со включением употребительнейших слов арабских и персидских и с переводом на русский язык, 2 тома. СПб., т. 1, 810 с.; т. 2, 421 с.

Зулалян М. 1971, Армения в первой половине XVI в. М., «Наука», 127 с.

Мухаммад ибн Хиндушах Нахчивани. 1964, Дастур ал-катиб фи тайин ал-маратиб (Руководство для писца при определении степеней). Критический текст, предисловие и указатели А. А. Али-заде. т. I, ч. I. М., «Наука», 20+586 с.

Петрушевский И. П. 1949, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв. Л., Изд-во Ленинградского университета, 383 с.

Петрушевский И. 1942, Внутренняя политика Ахмеда Ак-Койунлу, – «Известия» Азерб. ФАН СССР, № 2, с. 28–37.

Поппе Н. Н. 1938, Монгольский словарь Мукаддимат ал-Адаб. Отв. ред. В. В. Струве, в 2 вып., ч. I–II. – Труды Института востоковедения Академии наук СССР, XIV. М.–Л, Изд-во Академии наук СССР, IV+452 с.

- Радлов В. В. 1893, Опыт словаря тюркских наречий, т. 4, ч. 1. СПб., Тип. Российской Императорской Академии наук, с. 1078–1079.
- Рашид-ад-дин. 1946, Сборник летописей, т. 3, пер. К. Арендс, под ред. А. Ромаскевич, Е. Бертельс, А. Якубовский. М.–Л., «Наука», 340 с.
- Эфендиев О. А. 1957, К некоторым вопросам внутренней и внешней политики шаха Исмaила I (1502–1524). – Труды Института истории, т. XII. Баку, с. 150–180.
- A Chronicle of the Early Šafawis Being the Aḥsanu't Tawārīkh of Hasan-i-Rūmlū, Ed. by C. Sheddon 1931, Vol. I, (Persian text), Baroda, 562 p.; Vol. II (English translation), Transl. by C. Sheddon 1934, Baroda, XV+301+10 p.
- Clauson G. 1972, An etymological dictionary of pre-thirteenth-century Turkish, Clarendon Press, Oxford, XLVIII+989 p.
- Ashtor E. 1976, A Social and economic History of the Near East in the Middle ages, Berkeley, Los Angeles, London, University of Colifornia, 384 p.
- Décsy G. 1998, The Turkic Protolanguage: a computational reconstruction, Eurolingua, 216 p.
- İnalcık H. 1973, The Ottoman Empire: The Classical Age 1300-1600, London, Praeger, xii+258 p.
- Ioannes Augustus Vullers. 1867, Verborum linguae persicae radices: e dialectis antiquioribus Persicis et lingua Sanscrita et aliis linguis maxime cognatis erutae atque illustratae: supplementum lexicī sui persico-latini, Bonnae ad Rhenum: Impensis Adolphi Marci, volume 2, 136 p.
- M. Ölmez. 2015, Kipçakça Ve Osmanlıca Şaltak Hakkında, Anadolu Ağızlarında Ve Osmanlıcada Moğolcadan Geri. Ödünçleme Bir Söz Hakkında Notlar, Ankara, 147-151 p.
- Meninski F. 1687, Thesaurus Linguarum Orientalium Turcicae, Arabicae, Persicae, Praecipuas earum opes a Turcis peculiariter usurpatas continens: Nimirum Lexicon Turcico-Arabico-Persicum Non solum vocum tam simplicium quam conjunctarum copia maxima refertum, sed etiam innumeris phrasibus locupletatum..., Volume 2, p. 2852, Vienne, 1680; Idem volume 3, p. 1701; 1912, Vienne,
- Minorsky V. 1939, A “Soyūrghāl of Qāsim b. Jahāngīr Aq-qoyunlu” (903/1498), – BSOAS, Vol. 9, № 4, pp. 927-960.
- Minorsky V. 1955, The Aq-qoyunlu and Land Reforms, BSOAS, Vol. 17, № 3, pp. 449-462.
- Muḥammad b. Hindū-Shāh Nakhčiwānī. 2019, Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib, ed. by Sh. Munshī, ‘A. Dārānī, Brill, volume 2, 612 p.
- P. Luft. 1982, Review for “Regesten Publizierter Safawidischer Herrscherurkunden: Erlasse Und Staatsschreiben Der Fruhen Neuzeit Irans. By Renate Schimkoreit. (Islamkundliche Untersuchungen, Bd 68), Berlin, Klaus Schwarz Verlag, pp. 552. DM.87.”, in Bulletin (British Society for Middle Eastern Studies) 1984, vol. 11, N1, pp. 92-95.
- Persia in A. D. 1478-1490, An abridged translation of Faḍlullāh b. Ruzbihān Khunjī's Tārīkh-i ‘ālam-ārā-yi amīnī, by V. Minorsky, 1957, London, vii+136 p.
- Quiring-Zoeche R. 1986, AQ Qoyunlū, Encyclopaedia Iranica, Routledge-Kegan Paul, London, vol. II, Fasc. 2, pp.163-168.
- Sharaf Khān Bidlīsī. 1875, Cheref-nameh ou fastes de la nation kourde, par François-Bernard Charmoy, vol. 2, part 2, Paris, 262 p.

Vámbéry Á. 1867, Čagataische Sprachstudien enthaltend grammatikalischen Umriss, Chrestomathie und Wörterbuch der Čagataischen Sprache, Leipzig : Brockhaus, vii+358 p.

ЗНАЧЕНИЕ И ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ЯВЛЕНИЯ ШИЛТАКАТ И ПОДАТНОГО ТЕРМИНА (XIV–XVIII вв.)

ГОР МАРГАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: шилтакат, ильханы, подати и налоги, фискальная система, грамота, незаконные подати.

В период правления ильханов образовалась довольно сложная фискальная система. Начиная с конца XIII века параллельно ослаблению центральной власти в ильханате развивалась коррупция и анархия, вследствие чего податная система превратилась в тяжелый гнет. Около 30 податей и податных обязанностей ложились на плечи подвластных народов, однако даже после этого государственную казну не всегда удавалось заполнить, так как в основном собранные подати обворовывались самими чиновниками. Экономический спад, народное недовольство и зачастую бегство крестьян с мест проживания заставили ильхана Газан Махмуда попытаться провести реформы, в том числе экономические. Однако эти, как и последующие, реформы в дальнейшем не имели удачи, и тяжелая экономическая ситуация с раздутой фискальной системой продолжала существовать в постильханский период и даже позднее – в период Сефевидов.

Одна из часто упоминаемых «нелегальных» податей была известна под термином шилтакат. Явление шилтаката и сам термин до сих пор окончательно не изучены, а в специализированной литературе часто встречаются разные объяснения и трактовки: в одном случае шилтакат трактуется как взимание податей под ложными предлогами, в другом – как отдельный вид подати, в третьем – как экстраординарные подати или как один из видов «незаконных податей» и т. д.

Кроме анализа явления «шилтакат» приводятся также первые упоминания и использование податного термина в письменных источниках, в том числе, его распространение и значения в армянских источниках.

Гор Маргарян – к. и. н., старший научный сотрудник Института востоковедения НАН РА. Научные интересы: история средневекового мусульманского Востока, восточное источниковедение, кавказоведение. Автор 1 учебно-методического пособия и более 15 статей.
gor_margaryan@live.com

THE SIGNIFICANCE AND PECULARITIES OF THE USE
OF ŠILTĀQĀT AND THE TAX TERM
(14TH-18TH CC.)

GOR MARGARYAN

Summary

Key words: šiltāqāt, Ilkhans, taxes and duties, tax system, decrees, illegal taxes.

In the ruling period of the Ilkhans a complex and multi-layered fiscal system was formed. Since the end of the 13th century, in parallel with the weakening of the central power, corruption and arbitrariness of the state officials had developed in the Ilkhanate, as a result of which the tax system turned into a real oppression. Approximately 30 types of taxes and duties were imposed on the subject peoples, nevertheless, even after this it was difficult to replenish the state treasury, inasmuch as generally the collected taxes were robbed by the officials themselves. The economic decline, popular discontent and the frequent fleeing of the peasants forced Ilkhan Ghazan Mahmud to make an attempt so as to carry out reforms, including economic ones. However, these reforms, as well as subsequent ones, did not succeed in the future, and the difficult economic situation with an inflated fiscal system continued to exist in the post-Ilkhan period and even later in the Safavid period.

One of the frequently mentioned “illegal” taxes was known by the term šiltāqāt. The phenomenon of šiltāqāt and the term itself have not yet been fully studied, and in the specialized literature there are often different explanations and interpretations: in one case, šiltāqāt is interpreted as the collection of taxes under false pretenses, in the other – as a separate type of tax, in the third – as extraordinary taxes, or as one of the types of “illegal taxes”, etc.

In addition to the analysis of the “šiltāqāt” phenomenon, the first mentions and use of the taxable term in written sources, including its distribution and meaning in Armenian sources, are also given.

Gor Margaryan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the NAS RA Institute of Oriental Studies. Scientific interests: Medieval Muslim East history, eastern source-studies, Caucasology. Author of 1 methodical handbook and over 15 articles. gor_margaryan@live.com